*վերայ հրաման ետ արքայ Խոսրով, եթէ ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբս են՝ հաւատ զՀայոցն կալցին»): Սակայն լրացուցիչ աղբիւրագիտական նիւթի համադրումը թոյլ է տալիս մտածել, որ նոյն ժողովում կամ աւելի ճիշտ՝ գոնէ նրա համատեքստում, ըստ ամենայնի, քննարկուել ու լուծում են ստացել նաեւ տարածքային ահռելի ձեռքբերումներ ունեցած Իրանական տէրութեան համար կարեւորագոյն այլ պետական, վարչա-քաղաքական խնդիրներ:*

*Ըստ Ժ դարի պատմիչ Մովսէս Դասխուրանցու «Պատմութիւն Աղուանից»-ում (գրուած՝ 982-988 թթ. միջեւ[1]) պահպանուած մի քանի ուշագրաւ տեղեկութիւնների՝ Աղուանից աշխարհի «առաջին իշխան» Վարազ Գրիգորը Վիրոյ Աղուանից կաթողիկոսի (596-629) խնդրանքով էր Խոսրով արքայի կողմից նշանակուել իր պաշտօնում եւ «մկրտութիւն» էր ստացել Վիրոյից: Հմմտ. բնագրերը. «Վարդ ծնանի զՎարազման եւ զՇուշիկ տիկին եւ զՎարազ Գրիգոր՝ առաջին իշխանն Աղուանից, որ առ* [ձեռ. bl *էառ] զմկրտութիւն ի Վիրոյէ՝ Աղուանից կաթողիկոսէ»; «Այս Վարազ Տրդատ ի Միհրական տոհմէ էր, որք զԱղուանս ժառանգեցին որդի ի հօրէ առնլով: Սա ութերորդ էր ի Վարազ Գրիգորէ՝ առաջին իշխանէն Աղուանից»; «Տէր Վիրոյ, ամս ԼԴ... սա խնդրեաց ի Խոսրովայ արքայէ գրել պատիւս Գարդմանայ տէր եւ իշխան* [ձեռ. a *իշխանաց] Աղուանից ի վերայ թղթոց «առ կուսակալս աշխարհիս», զոր եւ դեռեւս գրեն»[2]:*

*Արդ՝ Վիրոյ կաթողիկոսը, որը 630-632 թթ. միջակայքում Անանուն Կաղանկատուացու կողմից շարադրուած եւ Մովսէս Դասխուրանցու կողմից գրեթէ բառացի արտագրուած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» կոչուող* միաբնակ *երկի վկայութիւններով՝ իր իշխանութեան առաջին տարիներից (ճշգրիտ՝ 602-ից) մինչեւ նախավերջին տարին (628 թ.) ապստամբներին սատարելու կասկածով Տիզբոնում էր պահւում պատուաւոր աքսորեալի կարգավիճակով[3], ըստ Սեբէոսի՝ 610-ական թթ. կէսերին Տիզբոնի «Պարսից ժողովի» մասնակիցներից էր, ընդ որում՝* երկաբնակ, *քաղկեդոնական դաւանանքով: Սեբէոսի այդ հատուածն է. «Իսկ որք զՔաղկեդոնին՝ զՎիրոյ զԱղուանից կաթուղիկոսն, եւ այլ բազում եպիսկոպոսունք ի Յունաց կողմանէ, եւ իշխանք, որք եկեալ էին ի ծառայութիւն Պարսից թագաւորին»): Նշելի է, որ պատմիչի երկի հեղինակային սկզբնագրի վերականգնման համար նշանակութիւն ունեցող* Ա *գրչագիրը Վիրոյի փոխարէն տալիս է* «զվիրս» *ընթերցումը, իսկ* Երից. *պատառիկը եւ* Միհրդ. *գրչագիրը՝* «զՎրաց»*: Սակայն եթէ դրա հիման վրայ մտածենք, թէ Սեբէոսը չի նշել Վիրոյի* անունը *(այլ՝* Վրաց, *չգիտես ինչու ընկած* եւ-*ով), ապա միեւնոյնն է՝ ժողովին մասնակցած Աղուանից կաթողիկոսը (այսպիսով՝ Վրաց կաթողիկոսի կողքին) այդ տարիներին եղել է հէնց նա:*

*Ըստ Անանիա Մոկացու եւ Արսէն Սափարացու (Ժ դար)՝ Է դ. առաջին տասնամեակի եկեղեցական բաժանումներից յետոյ, երբ յուսահատուած Աբրահամ Աղբաթանեցին 609 թ. ի վերջոյ նզովք ուղղեց Վրաց կաթողիկոս Կիւրիոնին եւ «Աղուանիցին» (այսինքն՝ Վիրոյին)[4], Աղուանից*

1 Տե՛ս **Հ. Ա. Ակոպյան**, *Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках*, Ер., 1987, էջ 212-223:

2 Տե՛ս **Մովսէս Կաղանկատուացի**, *Պատմութիւն Աղուանից աշխարհի*, Քննական բնագիրը եւ ներածութիւնը **Վ. Առաքելեանի**, Եր., 1983, գլ. Բ.ժԷ, էջ 172; Գ.ժթ /ի/, էջ 326; Գ.իգ /իդ/, էջ 343:

3 Վիրոյի «ապստամբութեան» մասին առաւել մանրամասն տե՛ս **Մ. եպ. Բարխուտարեանց**, *Պատմութիւն Աղուանից*, հտ. Ա, Թիֆլիս, 1902, էջ 92-93; **Հ. Ն. Ակինեան**, *Մովսէս Դասխուրանցի (կոչուած Կաղանկատուացի) եւ իր Պատմութիւն Աղուանից*, Վիեննա, 1970, էջ 197-200; **Հ. Ա. Ակոպյան**, *Албания-Алуанк...*, էջ 191-192:

4 *Գիրք թղթոց*, Տփխիս, 1901, էջ 193-194; **Աբրահամ Աղբաթանեցի**, *Թուղթք* [6], Հրատ. **Պ. Մուրադեան, Ա. Յակոբեան** – «Մատենագիրք Հայոց», հտ. Դ, Է դար, Անթիլիաս, 2005, էջ 19-20: